| Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | 031301.007 Հոգեբանություն |
| Ընդհանուր նկարագրությունը | Մագիստրոսի կրթական ծրագիրը կառուցված է հետևյալ հիմնական կրթամասերից<br>Մագիստրոսի կրթական ծրագրի ուսման տևողությունը 1 տարի է՝ 1-ին կիսամյակ 16 շաբաթ, 2-րդ կիսամյակ 12 և 4 շաբաթ պրակտիկա /մասնագիտական /:<br>Ծրագիրը բաղկացած է հետևյալ 5 մոդուլներից՝<br>• ընդհանուր մասնագիտական,<br>• մասնագիտական պատրաստման բաղադրիչ,<br>• կամընտրական առարկաներ,<br>• պրակտիկա,<br>• գիտահետազոտական աշխատանքներ |
| Ուսումնական պլանը | https://tinyurl.com/k5n2aacz |
| Շնորհվող աստիճանը | Հոգեբանության մագիստրոս |
| ՈԱՇ մակարդակը | Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ |
| Կրեդիտները | Կրեդիտների քանակը 60 |
| Ուսուցման ձևը | Առկա |
| Ծրագրի տևողությունը | 1 տարի |
| Դասավանդման լեզուն | Հայերեն |
| Ուսման վարձը | 600 000 ՀՀ դրամ |
| Վերջնարդյունքը | Ա. Մասնագիտական գիտելիք, իմացություն<br>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>Ա.1 Ձևավորել տեսական գիտելիքներ ընդհանուր և սպորտի հոգեբանության գործնական խնդիրներ լուծելու նպատակով:<br>Ա.2 Ինքնուրույն ընտրել, մշակել և ներդնել հոգեբանական ապահովման տեխնոլոգիաներն ու մեթոդները:<br>Ա.3 Իմանա անձի վարքի դրսևորման հոգեբանական, ֆիզիոլոգիական և սոցիալական առանձնահատկությունների վերլուծության պահանջները:<br>Ա.4 Տիրապետել մարզիկի ֆունկցիոնալ և հոգեկան վիճակների ախտորոշման և հետազոտության, թերապիայի գործիքային և ոչ գործիքային մեթոդներին:<br>Ա.5 Զարգացնել հոգեբանի գիտագործնական հմտությունները՝ դրանք փոխկապակցելով հոգեբանամանկավարժական պահանջների հետ և հարմարեցնել գործունեության տարբեր բնագավառներին համապատասխան: |

| | |
|---|---|
| | Ա.6 Գիտականորեն հիմնավորված ներկայացնել հոգեկանի դրսևորման գիտակցական, ենթագիտակցական ու անգիտակցական մակարդակները մարզական և ուսումնական գործունեության տարբեր իրավիճակներում:<br>Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ<br>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br>Բ.1 Կարողանալ գործնականում կիրառել նորարարական տեխնոլոգիաները հոգեբանական սպասարկման գործընթացում՝ ըստ նպատակի ու խնդիրների:<br>Բ.2 Տիրապետել հոգեախտորոշման, հոգեթերապիայի ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև դրանց մոդիֆիկացված տարբերակներին:<br>Բ.3 Տիրապետել հոգեվիճակների կանոնավորման ժամանակակից տեխնոլոգիաների ու մեթոդների իրականացման հմտություններին ու կարողություններին:<br>Բ.4 Իրականացնել հոգեբանական գիտահետազոտական աշխատանքներ սպորտային գործունեության, ֆիզիկական դաստիարակության, առողջարարական և  զանգվածային սպորտի ոլորտներում՝ կիրառելով համապատասխան գործիքակազմ:<br>Բ.5 Կարողանալ կիրառել անձի և գործունեության փոխկապակցված ուսումնասիրության սոցիալ–հոգեբանական, բժշկակենսաբանական, փիլիսոփայական գիտական սկզբունքները սպորտային գործունեության մեջ:<br>Բ.6 Ունենալ բարձրագույն մասնագիտական կրթությունն ընդհանրացնող տարբեր առարկաներից հիմնավոր գիտելիքներ և դրանք կիրառել մասնագիտական գործունեության մեջ՝ զարգացնելով գիտագործնական, կիրառական կարողությունները:<br>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ, հմտություններ<br>Այս ծրագրի  ավարտին ուսանողն ունակ կլինի<br>Գ.1 Հաղորդակցվել մասնագիտական ճիշտ կառուցված գրավոր և բանավոր խոսքով, հստակ տերմինաբանությամբ:<br>Գ.2 Ինքնուրույն ձեռք բերել և գործնականում կիրառել նոր գիտելիքներ, հմտություններ՝ կապը պահելով սեփական ուսումնագիտական ուսումնասիրությունների և ձեռք բերումների հիմնախնդրի հետ, դրսևորելով ինքնուրույն վերլուծական, քննադատական մտածողություն:<br>Գ.3 Ցուցաբերել գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրության և մեկնաբանության նորարար մոտեցումներ:<br>Գ.4 Ձևավորելել և զարգացնել թիմում աշխատելու կարողություններ ու հմտություններ: |
| Աշխատաշուկան | «Հոգեբանություն» մագիստրոսի  կրթական ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու որպես՝<br>ա/ սպորտի հոգեբան տարբեր մարզական թիմերում,<br>բ/ բարձրակարգ մարզիկների մարզիչ-հոգեբան,<br>գ/ սպորտի հոգեբան մարզական քոլեջներում, մարզադպրցներում<br>դ/ հոգեբանության դասընթացի լաբորատոր-գործնական պարապմունքների ղեկավար-հրահանգիչ բարձրագույն ուսումնական հաստատություններում, համալիր գիտական սպասարկման խմբի գիտաշխատող,<br>զ/ կրթության և մարզական կազմակերպությունների տարբեր օղակների ղեկավար պաշտոններում,<br>է/ մանկավարժ հոգեբան հանրակրթական դպրոցներում<br>ը/ սպորտի հոգեբան հոգեբանական կենտրոններում<br>թ/ հոգեբան-խորհրդատու: |